# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## Նախնական մասնագիտական կրթության «Ոստիկան» որակավորման «Կրակային պատրաստականություն» առարկայի դասընթացի

Քննարկվել և հաստատվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Հատուկ պատրաստականություն» կրթաճյուղի նիստում՝ արձանագրություն թիվ 4 01.06.2018թ.

ք. Երևան

2018թ.

# Թ Ե Մ Ա Տ Ի Կ  Պ Լ Ա Ն

**Նախնական մասնագիտական կրթության «Կրակային պատրաստականություն» առարկայի եռամսյա դասընթացի**

| N | Թեմաների անվանումը | Ժամաքանակն ըստ թե-մաների | Ժամաքանակն ըստ պարապմունքների ձևի | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Դասա-խոսու-թյուն | Գործ-նական | Սեմի-նար |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | 9մմ «Մակարով» ատրճանակի և 7,62մմ «Կալաշնիկով» արդիականաց-ված ինքնաձիգի, ձեռքի բեկորային նռնակների նշանակությունը, մարտական տվյալները: | 4 | 2 | - | 2 |
| 2. | 9մմ «Մակարով» ատրճանակի և 7,62մմ «Կալաշնիկով» արդիականաց-ված ինքնաձիգի ոչ լրիվ քանդումը և հավաքումը: | 6 | - | 4 | 2 |
| 3. | 9մմ «Մակարով» ատրճանակի և 7,62մմ «Կալաշնիկով» արդիականաց-ված ինքնաձիգի կառուցվածքը, մա-սերի և մեխանիզմների աշխատանքի սկզբունքը: | 4 | - | 2 | 2 |
| 4. | 9մմ «Մակարով» ատրճանակի և 7,62մմ «Կալաշնիկով» արդիականաց-ված ինքնաձիգի ստուգման և պահպանման պահանջները: | 2 | 2 | - | - |
| 5. | 9մմ «Մակարով» ատրճանակից և 7,62մմ «Կալաշնիկով» արդիականաց-ված ինքնաձիգից կրակելու ժամանակ առաջացած խափանումները և դրանց վերացման միջոցները: | 2 | 2 | - | - |
| 6. | Հրաձգության հիմունքները և դրանց կիրառման ձևերը: | 2 | - | 2 | - |
| 7. | Հրաձգության ժամանակ անվտանգու-թյան կանոնների պահպանումը: | 2 | 2 | - | - |
| 8. | 9մմ «Մակարով» ատրճանակից հրաձգություն՝ նախապատրաստական և N1 վարժու-թյունների կատարում | 6 | - | 6 | - |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **28** | **8** | **14** | **6** |

Կազմեց՝
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Հատուկ պատրաստականություն» կրթաճյուղի ավ. դասախոս, ոստ. փոխգնդապետ

_______________________ Է. Խ. Մարտիրոսյան

Քննարկվել և հաստատվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Հատուկ պատրաստականություն» կրթաճյուղի նիստում արձանագրություն թիվ _____01.06.2018թ.
կրթաճյուղի պետ, ոստ. փոխգնդապետ

____________________ Գ.Ա . Ջաղացպանյան

## 1. Դասընթացի ընդհանուր ծավալը ըստ պարապմունքների տեսակների

Ուսումնական պլանին համապատասխան դասընթացի ուսումնասիրման համար հատկացված է 28 ժամ, որից՝

- դասախոսություն - 8 ժամ,
- գործնական - 14 ժամ,
- սեմինար - 6 ժամ:

## 2. «Կրակային պատրաստականություն» մոդուլի ուսուցման նպատակը և խնդիրները

Մոդուլի հիմնական նպատակն է սովորողների մոտ ձևավորել օրենքով սահմանված կարգով զենքի խնամքի, պահպանման, գործադրման, դրա հետ վարվելու անվտանգության հմտություններ և գործնական կարողություններ:

Մոդուլի դասավանդման ընթացքում լուծվում են մասնագիտական ուսուցման հետևյալ խնդիրները.

1. Յաղորդել հրազենի հետ վարվելու գործնական հմտություններ:
2. Զարգացնել հրազենի կառուցվածքի, հիմնական մասերի և մեխանիզմների առանձնահատկությունների վերաբերյալ գործնական գիտելիքներ:
3. Ձևավորել հրաձգության անհրաժեշտ հմտություններ և կարողություններ:
4. Արմատավորել հրազենի գործադրման ժամանակ անվտանգության ապահովման ունակություններ:

## 3. Դասընթացի բովանդակության յուրացման մակարդակին ներկայացվող պահանջները

Դասընթացի ավարտից հետո սովորողը պետք է կարողանա՝

1. ներկայացնել հրաձգության հիմունքները, հրազենի տակտիա-տեխնիկական բնութագրերը,
2. տիրապետել հրազենի կառուցվածքին,
3. տիրապետել հրազենի խնամքի և պահպանության հմտություններին,
4. ցուցադրել հրաձգության գործնական հմտություններ,
5. գործնականում ապահովել հրազենի գործադրման անվտանգությունը:

## 4. Կապը ուսումնական պլանով նախատեսված այլ առարկաների հետ

Լինելով դասավանդվող մասնագիտական հիմնական առարկա դասընթացը սերտորեն կապված է ուսումնական պլանով նախատեսված այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են՝ «Ծառայության իրականացման մարտավարություն», «Իրավագիտության հիմունքներ», «Մանկավարժությունը և հոգեբանությունը ոստիկանության ծառայողի գործունեության մեջ», «Մարդու իրավունքները և ոստիկանությունը» առարկաները:

## 5. Դասընթացի ուսուցման մեթոդական ցուցումներ

Ուսուցումը իրականացվում է դասախոսությունների, գործնական պարապմունքների և սեմինարների տեսքով, որոնք անց են կացվում ինտերակտիվ մեթոդներով: Դասավանդման ընթացքում օգտագործվում են տեսանյութեր և դիդակտիկ պաստառներ: Գործնական պարապմունքների ընթացքում պրակտիկ վարժությունների, իրավիճակային առաջադրանքների միջոցով սովորողների մոտ ձևավորվում են գործնական անհրաժեշտ հմտություններ և ունակություններ, որոնք տեսական գիտելիքների միջոցով ամրապնդվելով, դառնում են արդյունավետ մասնագիտական գործունեության կարևոր պայման:

Սովորողներին հաղորդված գիտելիքների և հմտությունների իմացության ամրապնդումը ապահովելու համար ուսուցման արդյունքում անց են կացվում համալիր գործնական պարապմունքներ, որոնց ընթացքը վերահսկվում է դասախոսների միացյալ ուժերով:

## 6. Ուսումնական նյութի բովանդակությունը

**Թեմա 1. 9մմ «ՄԱԿԱՐՈՎ» ատրճանակի և 7.62մմ «Կալաշնիկով» արդիականացված ինքնաձիգի, ձեռքի բեկորային նռնակների նշանակությունը, մարտական տվյալները:**

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

1. 9մմ ատրճանակ «Մակարով»-ի /աշխատանքը/ նշանակությունը և մարտական տվյալները;
2. 7.62մմ արդիականացված ինքնաձիգ «Կալաշնիկով»-ի /աշխատանքը/ նշանակությունը և մարտական տվյալները;
3. ձեռքի բեկորային նռնակների /աշխատանքը/ նշանակությունը և մարտական տվյալները:

**Թեմա 2. 9մմ «ՄԱԿԱՐՈՎ» ատրճանակի և 7.62մմ «Կալաշնիկով» արդիականացված ինքնաձիգի ոչ լրիվ քանդումը և հավաքումը:**

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

1. 9մմ ատրճանակ «Մակարով»-ի ոչ լրիվ քանդումը;
2. ատրճանակի ոչ լրիվ քանդած վիճակում մասերի զննումը և հավաքումը;
3. 7.62մմ արդիականացված ինքնաձիգ «Կալաշնիկով»-ի ոչ լրիվ քանդումը;
4. ինքնաձիգի ոչ լրիվ քանդած վիճակում մասերի զննումը և հավաքումը;
5. ատրճանակ «Մակարով»-ի և ինքնաձիգ «Կալածնիկով»-ի քանդումը և հավաքումը ըստ նորմատիվային ցուցանիշների:

**Թեմա 3. 9մմ «ՄԱԿԱՐՈՎ» ատրճանակի և 7.62մմ «Կալաշնիկով» արդիականացված ինքնաձիգի կառուցվածքը, մասերի, մեխանիզմների աշխատանքի սկզբունքները:**

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

1. ատրճանակ «Մակարով»-ի և ինքնաձիգ «Կալաշնիկով»-ի մասերի և մասերի աշխատանքը, կառուցվածքը;
2. ատրճանակ «Մակարով»-ի և ինքնաձիգ «Կալաշնիկով»-ի մեխանիզմների աշխատանքը;
3. «Մակարով»-ի և «Կալաշնիկով»-ի փամփուշտների կառուցվածքը;
4. «Մակարով»-ի և «Կալաշնիկով»-ի պիտույքների դերն ու նշանակությունը;
5. ատրճանակի մասերի և մեխանիզմների դիրքը մինչև լիցքավորելը;
6. ատրճանակի մասերի և մեխանիզմների աշխատանքը լիցքավորելիս;
7. ատրճանակի մասերի և մեխանիզմների աշխատանքը կրակելիս և կրակելուց հետո;
8. ատրճանակի մասերի և մեխանիզմների աշխատանքը ինքնալիցքավորմամբ կրակելիս;
9. ատրճանակի դիրքը, մասերի և մեխանիզմների աշխատանքը պահեստատուփի փամփուշտները վերջանալուց հետո:

**Թեմա 4. 9մմ «ՄԱԿԱՐՈՎ» ատրճանակի և 7.62մմ «Կալաշնիկով» արդիականացված ինքնաձիգի ստուգման և պահպանման պահանջները:**

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

1. ատրճանակ «Մակարով»-ի և ինքնաձիգ «Կալաշնիկով»-ի ստուգումը;
2. յուղման, մաքրման, պահպանման նորմատիվային պահանջները և անհրաժեշտ գործողությունները:

**Թեմա 5. 9մմ «ՄԱԿԱՐՈՎ» ատրճանակի և 7.62մմ «Կալաշնիկով» արդիականացված ինքնաձիգից կրակելու ժամանակ առաջացած խափանումները և դրանց վերացման միջոցները:**

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

1. ատրճանակ «Մակարով»-ի և ինքնաձիգ «Կալաշնիկով»-ի կրակելու ժամանակ առաջացած խափանումները;
2. կրակելու ժամանակ առաջացած խափանումների պատճառները:
3. խափանումների վերացման միջոցները /ձևերը/:

**Թեմա 6. Հրաձգության հիմունքները և դրանց կիրառման ձևերը:**

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

1. մինչև կրակահերթ կատարելը, հրազենի օգտագործման և դիրքավորման ձևերը;
2. տարբեր իրավիճակներում հրազենի գործադրման ձևերը:
3. անշարժ և շարժական թիրախների խոցելու հմտությունները;
4. թիրախին խոցելու նորմատիվային պահանջների իրականացումը:

**Թեմա 7. Հրաձգության ժամանակ անվտանգության կանոնների պահպանումը:**

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

1. հրաձգության ժամանակ կարգապահական կանոնների պահպանումը;
2. հրաձգության ժամանակ անվտանգության կանոնների պահպանումը;
3. խափանումների վերացման միջոցները /ձևերը/:

**Թեմա 8. 9մմ «ՄԱԿԱՐՈՎ» ատրճանակից հրաձգություն՝ վարժություն նախապատրաստական և №1 /հրաձգարանում/:**

# Գրականության ցանկ


1. «Կրակային պատրաստականություն» մեթոդական ձեռնարկ, Երևան 2009թ.
2. «Հրաձգության ուսումնական ծրագրում ընդգրկված վարժությունների ուսուցման օրինակելի մեթոդիկա» մեթոդական ձեռնարկ, Երևան 2010թ.
3. «ՀՀ ոստիկանության ծառայողների կրակային պատրաստականության տեսական և գործնական գիտելիքների հարցաշար» ուսումնական ձեռնարկ, Երևան 2010թ.
4. ՀՀ ոստիկանության պետի 20.04.2009թ-ի թիվ 911-Ա հրաման ՀՀ ոստիկանության ծառայողների «հրաձգության ուսումնական ծրագիր»
5. Մոտոհրաձգային ստորաբաժանումների կրակային պատրաստականության ուսումնական ձեռնարկ, հաստատված ՀՀ ՊՆ 14.04.2006թ. №446 հրամանով
6. А.Б. Жук «Энциклопедия стрелкового оружия» 2006г. г. Москва
7. «Наставление по стрековому делу» 9мм пистолет Макарова 1968г.
8. «Наставление по стрековому делу» 1985г.
9. Р.Форд «Знаменитые винтовки мира» военные технологии 2005г. г.Москва:
10. «Հրաձգության մարտավարություն» ուսումնագործնական ձեռնարկ, ՀՀ ոստիկանության կրթահամալիր, ք.Երևան 2015թ.
11. Ոստիկանության ծառայողների կողմից մարտական զենքից հրաձգության առաջնության կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ ոստիկանության պետի թիվ 1400-Ա հրաման, ք.Երևան 2012թ.